ՏԵՂԵԿԱՆՔ
ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ
2011-2012 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐՈՎ 2012 ԹՎԱԿԱՆԻՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(տարեկան)

Միջոցառման անվանումը	**Ակնկալվող արդյունքը** **2012**	**Միջոցառումների կատարման արդյունքները**
1. Կրթության ոլորտի իրավական ակտերի վերանայում, կոռուպցիայի ռիսկերի գնահատում	- ոլորտի 50 իրավական ակտեր վերանայվել են	***Հանրակրթության ոլորտում*** ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 06.04.2012թ. N260-Ա/Ք հրամանով հաստատվել են <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի վարպետության մակարդակի մասին>> տեղեկանքի և բնութագրիչների ձևերը, 18.05.2012թ. N496-Ն հրամանով հաստատվել է <<Ատեստավորման ենթակա ուսուցչին վերապատրաստող երաշխավորված կազմակերպությունների ցանկի ձևավորման կարգը>>, 03.05.2012թ. N388-Ն հրամանով հաստատվել է <<Ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման, ավարտման և ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած սովորողի՝ հաջորդ դասարան կամ հանրակրթության հաջորդ աստիճան փոխադրման կարգը>>, 10.08.2012թ. N833-Ն հրամանով հաստատվել է <<Դրսեկության ձևով (էքստեռն) փոխադրական և ավարտական քննություններ կազմակերպելու կարգը>>, 18.09.2012թ N858-Ն հրամանով հաստատվել է <<Նախադպրոցական ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական հագեցվածության նորմատիվները (Փափուկ գույքի հագեցվածութան նորմատիվները՝ ըստ նախադպրոցական ուսումնական հաստատությունների տեսակների և խմբերի) կարգը>>, 14.12.2012թ. N1144-Ն հրամանով հաստատվել է <<Հանրակրթական, այդ թվում՝ նախադպրոցական, ուսումնական հաստատություն. օգտագործվող ձեռնարկների փորձաքննության և գործածության երաշխավորման կարգը>>,

		ՀՀ կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի N1667–Ն որոշմամբ հաստատվել է <<Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատության հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի վերապատրաստման կարգը>>: Լրամշակվում են՝ <<Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ուսումնական առաջադիմության գնահատման երաշխավորությունների կարգը>>, <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը>>, որի նպատակն է նվազագույնի հասցնել ուսուցիչների աշխատանքի տեղավորման գործընթացում առկա կոռուպցիոն ռիսկերը, <<Նախադպրոցական ուսումնական հաստատության տարիֆիկացիոն ցուցակի ձևաթուղթը>>: <<ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություն սովորողի ընդունելության, տեղափոխման և ազատման կարգը>>: Մշակման փուլում են՝ <<Ուսուցչի կողմից հավաքագրվող անհրաժեշտ կրեդիտների անվանացանկը, չափորոշիչները և նվազագույն չափաքանակը>>, <<Սովորողի անհատական ուսուցման>> կարգը: ***Մասնագիտական կրթության ոլորտում*** Մշակվել և հաստատման են ներկայացվել՝ <<ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 12-ի N 73-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով ամբողջությամբ վերանայվել է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունները, որակավորումները և ուսումնառության տևողությունը, ապահովվել է համադրելիությունը ՄԿՈՒՀ որակավորումների ազգային շրջանակին, <<Կրթության մասին>> ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին>>, <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին>> և <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ

		Օրենքների նախագծերի փաթեթը: Օրենսդրական փոփոխությունների փաթեթով նախատեսվում է կատարելագործել նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարման որակն ու արդյունավետությունը, ներդնել տնօրենների պարտադիր վերապատրաստման և հավաստագրման համակարգ, ապահովել հավասար պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար, ինչպես նաև ՀՀ մասնագիտական կրթության և ուսուցման համակարգի ինտեգրումը Եվրոպական մասնագիտական կրթական տարածքին: Մշակման փուլում են՝ <<ՀՀ բարձրագույն մասնագիտական ուսումնական հաստատություններում երկրորդ մասնագիտություն ստանալու կարգը>>, <<Կրթական ծրագրերի իրականացման լիցենզիայի գործողությունը կասեցված և (կամ) դադարեցված բարձրագույն ուսումնական հաստատությունների (կամ դրանց մասնագիտությունների) սովորողների ընթացիկ և (կամ) ամփոփիչ ատեստավորման կարգը>>: ՀՀ կառավարության՝ 26.04.2012թ. N597-Ն որոշմամբ հաստատվել է <<Պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգը>>, համաձայն որի ընդունելության համակարգում իրականացվել են լրջագույն փոփոխություններ, որոնք միտված են կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը և ուսանողների իրավունքների պաշտպանությանը: Առաջին անգամ ուսանողներին հնարավորություն է տրվել բողոքարկել պետական ավարտական քննությունները, բացի այդ, ձայնագրվել, իսկ որոշ բուհերում նաև տեսագրվել է քննությունների ողջ ընթացքը:
2. Ավարտական, միասնական և կենտրոնացված քննությունների գործընթացի վերանայում	- կազմված են գրավոր և բանավոր քննությունների փորձարկված հարցերի բանկեր՝ յուրաքանչյուր առարկայի գծով գրավոր քննության 5000 հարց, բանավոր քննության 1000 հարց, որոնք ներառում են	2012թ սկզբին ԳԹԿ-ն հրատարակել է <<Հայոց լեզու, գրականություն>> և <<Մաթեմատիկա>> առարկաների շտեմարանները՝ օգտագործելով նաև հանրապետության տարբեր մարզերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների ներկայացրած թեստերի նմուշները (Ա և Բ մակարդակներով): <<Հայոց լեզու, գրականություն>> առարկայի առաջադրանքների շտեմարանը հրատարակվել է 4 մասով, իսկ <<Մաթեմատիկա>> առարկայի շտեմարանը՝ 2 մասով: Այս տարի դիմորդը նախապես տեղեկացված

	ուսումնական ծրագիրն ամբողջ ծավալով, - հրապարակված են հարցերը՝ պատասխաններով	էր նշված առարկաների քննության ժամանակ իր առջև դրվող թեստի առաջադրանքներին: ԳԹԿ-ի կողմից հրատարակվել են նաև առարկայական ուղեցույցները: 2012թ. վերջին ԳԹԿ-ի կողմից հրատարակվել են նաև <<Կենսաբանություն>>, <<Ֆիզիկա>>, <<Քիմիա>>, <<Օտար լեզու>>, <<Հայոց պատմություն>>, <<Աշխարհագրություն>> առարկաների շտեմարանները, իսկ <<Հայոց լեզու, գրականություն>>, <<Մաթեմատիկա>> առարկաների շտեմարանները վերահրատարակվել են: Միաժամանակ պարզեցվել է նաև ընդունելության համակարգը ՄԿՈՒ ոլորտում: 2011-2012թթ. ուսումնական տարվանից նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ընդունելությունն իրականացվում է առանց ընդունելության քննությունների՝ մրցութային հիմունքով, բացառությամբ՝ արվեստի, առողջապահության և սպորտի ոլորտների: Իսկ 2012-2013 ուսումնական տարվանից 50% ավելացել է նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում անվճար ուսուցմամբ (նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցմամբ) ընդունելության տեղերը: 2012թ. առաջին անգամ մասնավոր բուհերի դիմորդները ընդունելության քննությունները հանձնել են կենտրոնացված՝ պետական բուհերի դիմորդների հետ միասին:
3. Բարձրագույն կրթության ֆինանսավորման արդյունավետ համակարգի ներդրում՝ ԲԿ որակի և համապատասխանության բարձրացման, արդյունավետության բարելավման և հասարակության տարբեր սոցիալական խմբերի համար հավասար մատչելիության	- ներդրված են կրթաթոշակներ, նպաստներ՝ համակցված ուսանողի առաջադիմության, կարիքավորության և տնտեսության զարգացման առաջնային ոլորտների պահանջարկի և այլ գործոններով, - ընդլայնված են ուսանողի աջակցման ծառայությունները, մասնավորապես՝	ՀՀ կառավարության հավանությամբ սկսվել են գերակա նշանակություն ունեցող մասնագիտությունների ցանկի կազմման և մասնագետների պահանջարկի գնահատման աշխատանքները: Ս/թ հունիսի 27-ին ՀՀ կառավարություն է ներկայացվել պետության համար առաջնային նշանակություն ունեցող տնտեսության ճյուղերի զարգացման ծրագրերի հիման վրա գերակա նշանակություն ունեցող մասնագիտությունների ցանկի որոշման և մասնագետների պահանջարկի գնահատման վերլուծության հաշվետվությունը: Մշակման փուլում են ուսանողի ֆինանսական վիճակի գնահատման չափանիշները և ուսանողների ֆինանսական աջակցության ծրագիրը /կարգը/: Այս գործընթացի վերաբերյալ ՀՀ

ապահովման նպատակով	ուսանողական վարկեր, վարձավճարների զեղչման, վճարների հետաձգման մեխանիզմների կիրառում, - սահմանված է ըստ մասնագիտությունների վարձավճարների չափի որոշման մեթոդաբանությունը, - ներդրված է բուհերի կապիտալ ծախսերի և զարգացման ծրագրերի ֆինանսավորում, - ավելացված են բուհերի ֆինանսավորման ծավալները	կառավարություն է ներկայացվել համապատասխան հաշվետվություն: ՀՀ կրթության և գիտության նախարարի (27.06.12թ. N646-Ա/Ք) և ՀՀ էկոնոմիկայի նախարարի (28.06.12թ. N526-Ա) համատեղ հրամանով հաստատվել է <<ՈՒսման վարձերի ձևավորման մեթոդաբանությունը>>: Իսկ ուսանողական վարկերի տրամադրման գործընթացը դադարեցվել է 2011 թվականի սեպտեմբերի 7-ին՝ ՀՀ վարչապետի մոտ կայացած խորհրդակցության N14.7/[87922]-11 արձանագրային որոշմամբ: Միաժամանակ ուսանողներին կրթաթոշակ տրամադրելու նպատակով ՀՀ կառավարության կողմից Հայաստանի երիտասարդական հիմնադրամին հատկացվել է 60 մլն դրամ, որի շրջանակում հայտարարվել է մրցույթ: Մրցույթին մասնակցել են պետական բուհերի առկա ուսուցման առաջին և երկրորդ կուրսերի՝ անվճար համակարգում չընդգրկված ուսանողները: Հիմնադրվել է Նորարարությունների մրցակցային հիմնադրամը, և ՀՀ կառավարության կողմից հավանություն է տրվել նշված հիմնադրամի կողմից բուհերին դրամաշնորհների տրամադրման գործընթացին: Բարձրագույն կրթության ֆինանսավորման ծավալը 2012 թվականին պահպանվել է 2011 թվականի մակարդակին՝ 4.8մլրդ դրամ, չնայած այն հանգամանքին, որ բուհերի ուսանողների թվակազմը նվազել է կապված 2011 թվականին դպրոցների շրջանավարտներ չլինելու հետ, իսկ մեկ ուսանողի միջին տարեկան ծախսը ավելացել է 13.7%-ով՝ կազմելով 351.3 հազար դրամ:
4. Հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման ծավալների ավելացում	- ներդրված է «Հանրակրթական ուսումնական հաստատություններին ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորման կարգը», որը կսահմանի գործունեության արդյունավետության և որակի ցուցանիշներից կախված զարգացման ֆինանսավորման նոր մեխանիզմ, - սահմանված է	<<Հանրակրթական ուսումնական հաստատություններին ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսավորման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը 2011 թվականի հունիսի 8-ի N01/11.1/6082-11 գրությամբ ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարություն: Փորձագիտական եզրակացություն ստանալուց հետո այն սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարություն, սակայն իրավական ակտի ընդունումը ՀՀ կառավարության կողմից հետաձգվել է: <<Հանրակրթական ուսումնական հաստատությունների լրացուցիչ ֆինանսավորման մրցույթի սահմանման կարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագծին անդրադարձ կլինի <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքում համապատասխան

	ֆինանսավորման նոր բանաձև, որը տարբերակում է ֆինանսավորումն ըստ կրթական աստիճանների	փոփոխություններ կատարելուց հետո: ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 18-ի N259-Ն որոշմամբ սահմանված է հանրակրթական դպրոցների ֆինանսավորման նոր բանաձև, որը տարբերակում է նաև ֆինանսավորումն ըստ կրթական աստիճանների և ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարի 1-ից:
5. Միջին մասնագիտական և բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում	- տեսչավորված են ՄՄՈՒՀ-ների 50%-ը, - տեսչավորված են ԲՈՒՀ-երի 50%-ը	ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 29.03.2012թ. N152-Ա հրամանի համաձայն ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում (բոլոր միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների գրեթե 90%-ում) իրականացվել է ընդունելության, փոխադրման, տեղափոխման, ավարտման կարգերին համապատասխան սովորողների շարժի թեմատիկ ստուգում: Միաժամանակ ՄԿՈՒ ոլորտում անցում է կատարվել միասնական կառավարման համակարգի՝ Երևանի քաղաքապետարանի և պետական կառավարման այլ մարմինների ենթակայությամբ գործող միջին մասնագիտական կրթական հաստատություններն անցել են ՀՀ ԿԳՆ ենթակայության տակ: Բարձրագույն ուսումնական հաստատություններում ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն կիրականացվի <<Կրթության պետական տեսչության մասին>> ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություն կատարվելուց հետո: Ներկայումս նշված օրինագիծը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է առաջին ընթերցմամբ: Մինչ այդ սակայն 2012 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ բուհերի 25%-ում իրականացվել են ուսումնասիրություններ, որոնք Նախատեսվում է շարունակել նաև 2013 թվականի ընթացքում:
12. Վարչական իրավախախտումների մասին օրենսդրության մեջ կրթության ոլորտի իրավախախտումների ցանկի վերանայում	- վարչական տույժերի կիրառում՝ ըստ կրթական մակարդակների	2011թ. 1-ին եռամսյակում ՀՀ կառավարություն ներկայացված՝ <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ նոր օրենսգրքում ՀՀ կրթության պետական տեսչությանը՝ ըստ կրթական մակարդակների, ուսումնական հաստատությունների նկատմամբ վարչական տույժեր կիրառելու լիազորություն վերապահելու մասին առաջարկությունը ներկայումս գտնվում է ՀՀ Ազգային ժողովում: ՈՒսումնական հաստատություններում իրականացված տեսչական ստուգումների արդյունքում 2012թ. տարբեր աստիճանի վարչական

		տույժեր են կիրառվել ընդհանուր թվով 60 պաշտոնատար անձանց (բոլորն էլ հանրակրթական դպրոցների տնօրեններ) նկատմամբ. 7-ին տրվել է խիստ նկատողություն, 29-ին՝ նկատողություն, 23-ին՝ նախազգուշացում, 2-ը ազատվել է զբաղեցրած պաշտոնից: Ընդ որում, մեկ անձի նկատմամբ նույն տարվա ընթացքում կիրառվել է 2 տույժ՝ նախազգուշացում և նկատողություն:
13. Կրթության ոլորտի թափանցիկության, հաշվետվողականության և հանրային իրազեկման բարձրացում	- լուսաբանված է կրթության ոլորտում իրականացվող հակակոռուպցիոն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ընթացքը, - գործում է ՀՀ ԿԳ նախարարության պաշտոնական նոր կայքը, որում գործում է ոլորտում իրականացվող հակակոռուպցիոն ծրագրերի տեղեկատվական էջ, - ԶԼՄ-ներով հրապարակվել են ուսումնառության տվյալ ժամանակահատվածում իրականացվող գործընթացում շահառուների համար հնարավոր առկա ռիսկերի վերաբերյալ պարզաբանումները, - հրապարակված են կրթության ոլորտում իրականացվող մրցույթների գնահատման չափանիշները և արդյունքները, - լուսաբանվել են ուսանողների	ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքում՝ www.edu.am 2011 թվականից գործում է ոլորտում իրականացվող հակակոռուպցիոն ծրագրերի տեղեկատվական էջ, որտեղ զետեղված է <<Կրթական համակարգում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի 2011-2012թթ. միջոցառումների համալիր ծրագիրը>>, ինչպես նաև այդ ծրագրի հետ կապված հաշվետվությունները: Նշված տեղեկատվությունը և իրականացված գործողությունների վերաբերյալ տեղեկությունները հրապարակվել են տարբեր լրատվամիջոցներով: ՀՀ Բացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության <<Study in Armenia>> օտարալեզու կայքը: Գործում է <<Հետադարձ կապ>> բաժինը, որն անմիջական հաղորդակցություն է ապահովում քաղաքացու և ոլորտի պատասխանատուների միջև: ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքում և կրթական պորտալում բացվել է <<Հանրային քննարկում>> բաժինը, որը հնարավորություն է տալիս հանրությանը մասնակցել իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին: Հանրային քննարկումների են դրվել 2012 թվականին մշակված և լրամշակված թվով 10 իրավական ակտերի նախագծերը: Կայքում տեղադրվել են հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի և ուսուցչի, ինչպես նաև արհեստագործական ուսումնարանների և քոլեջների տնօրենների, բուհերի ռեկտորների թափուր տեղերի մրցույթի հայտարարությունները, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու համար իրականացվող վերապատրաստումների ժամանակացույցերը: Տեղադրվել են նաև սովորողների կրթաթոշակների, ինչպես նաև հանրակրթության պետական չափորոշչին դասագրքերի համապատասխանության գնահատման առարկայական

	շրջանում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները	հանձնաժողովների անդամների թեկնածուների վերաբերյալ մրցույթների հայտարարությունները, թեկնածուներին ներկայացվող պահանջները: Այդ հայտարարությունները հրապարակվել են նաև <<Կրթություն շաբաթաթերթում>>: ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքում և կրթական պորտալում (www.edu.am, www.armedu.am), ինչպես նաև <<Կրթություն>> շաբաթաթերթում հրապարակվել են նաև ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 2011-2012թթ. տեսչավորման և ուսումնասիրությունների ու ստուգումների հաշվետվությունները: Միայն 2012թ. ընթացքում ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքում հրապարակվել է 600 լրատվական և տեղեկատվական նյութ՝ նպատակ ունենալով ապահովել նախարարության թափանցիկ և հաշվետվողական աշխատանքը, այդ թվում նաև արագ արձագանքելով հասարակությանը հուզող հարցերին: ՀՀ ԿԳՆ-ն առաջինն է պետական կառույցներից, որը բացել և սպասարկում է <<ՀՀ ԿԳՆ ընդունարան>> ֆեյսբուքյան էջը, որտեղ ստացված բոլոր ահազանգերը ստացել են համապատասխան ընթացք: Ստեղծվել է կրթական պետական փաստաթղթերի տեղեկատվական համակարգ, որը հնարավորություն է տալիս որոնողական համակարգի միջոցով ճշտել ցանկացած քաղաքացու կրթական փաստաթղթի իսկությունը: Այս համակարգում մուտքագրված է 70 հազար տվյալ, և համակարգի համալրումը շարունակվում է: Հրավիրվել են ՀՀ ԿԳ նախարարի մամլո ասուլիսներ, որտեղ հատուկ անդրադարձ է կատարվել կրթության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը միտված միջոցառումներին և արձանագրված արդյունքներին: Նախարարի ասուլիսի վերաբերյալ նյութերը հրապարակվել են Panorama.am, Armenpress.am, Lragir.am, Tert.am, Aysor.am, Hayeli.am, 1in.am, Panarmenian.net, Lurer.com, Ilur.am, Hetq.am, Emedia.am, Slaq.am կայքերում, ինչպես նաև եթեր են հեռարձակվել 18 հեռուստառեպորտաժ՝ Հանրային հեռուստաընկերությամբ, Արմենիա, Արմնյուզ, Շանթ, Կենտրոն, Երկիր Մեդիա, Ար, ԳԱԼԱ, Երևան, ՄИР հեռուստաընկերություններով: Միաժամանակ ՀՀ ԿԳ նախարարի կողմից տրվել են համապատասխան հանձնարարականներ՝ ՀՀ պետական հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական

		հաստատություններում աշխատանքային տետրերի, օրագրերի և այլ ուսումնաօժանդակ նյութերի վաճառքը բացառելու, ինչպես նաև դրամահավաքը արգելելու վերաբերյալ: Նշված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվական նյութերը տեղադրվել են նաև ՀՀ ԿԳՆ պաշտոնական կայքի՝ www.edu.am <<Լուրեր>> բաժնում:
14. Գիտելիքի արժևորմանը միտված հասարակական կարծիքի ձևավորում	-հեռարձակվել են սոցիալական հոլովակներ -հրապարակային խրախուսման են արժանացել ինտելեկտուալ խաղերի և մրցույթների, առարկայական օլիմպիադաների հաղթողները, լավագույն ուսանողներն ու աշակերտները	2011-2012 ուսումնական տարում ուսումնական պլանով նախատեսված 16 առարկաներից անցկացվել են դպրոցականների առարկայական օլիմպիադաների մարզային և հանրապետական փուլերը: Ուսումնական պլանով նախատեսված 6 առարկաներից, հուլիս-սեպտեմբեր ամիսներին ընդհանուր թվով 29 աշակերտներ մասնակցել են միջազգային օլիմպիադաների՝ մաթեմատիայից՝ 6, ֆիզիկայից՝ 5, քիմիայից՝ 4, կենսաբանությունից՝ 4, ինֆորմատիկայից՝ 4, աստղագիտությունից՝ 6 աշակերտ: Նշված առարկաներից մեր աշակերտները նվաճել են ընդհանուր թվով 16 մեդալ՝ 13 բրոնզե, 2 արծաթե և 1 ոսկե: Հրապարակային խրախուսման են արժանացել ինտելեկտուալ խաղերի և մրցույթների, առարկայական օլիմպիադաների հաղթողները, լավագույն ուսանողներն ու աշակերտները: <<Կենգուրու-2012>> և միջազգային օլիմպիադաներում հաղթած աշակերտները ներկայացվել են խրախուսման՝ ՀՀ նախագահի կողմից: Հեռուստաընկերությունները պատրաստել են լավագույն արդյունքներ ցույց տված դպրոցականների ռեպորտաժների շարք: Զանգվածային լրատվամիջոցներով լայն լուսաբանվել են ավարտական և միասնական քննությունները, ինչպես նաև բուհական ընդունելության քննությունների մրցույթի հետ կապված բոլոր հարցերը: Առաջին անգամ անցկացվել է <<Լավագույն ուսանող>> մրցույթը, հաղթող են ճանաչվել թվով 33 ուսանողներ ՀՀ տարբեր բուհերից: Առաջին տեղ զբաղեցրել է 12, երկրորդ տեղ՝ 11, երրորդ տեղ՝ 10 ուսանող: Նախատեսվում է հաղթողներին տրամադրել դրամական պարգևներ և պատվոգրեր: Նախաձեռնությունը իրականացվել է Հայաստանի Երիտասարդական հիմնադրամի և Վիվա Սել-ՄՏՍ-ի աջակցությամբ:

		2012թ. հոկտեմբեր ամսին կայացել է <<Հայաստանի հմտություններ>> ազգային մրցույթը երեք մասնագիտությունների գծով՝ ոսկերչություն, նորաձևություն, խոհարարություն: Մրցույթում հաղթող ճանաչված ՄԿՈՒՀ հաստատությունների ուսանողները հնարավորություն կունենան ներկայանալ և մրցակցել իրենց հմտություններով 61 այլ երկրների ուսանողների հետ՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության Լայպցիգ քաղաքում անցկացվելիք <<Համաշխարհային հմտություններ>> 42-րդ միջազգային մրցույթում: Հայաստանյան էլեկտրոնային լրատվամիջոցներով հեռարձակվել են գիտելիքի արժևորմանը միտված սոցիալական գովազդների շարք: